

Գենդերը և գյուղատնտեսությունը

Գենդերային անհավասարությունները շարունակում են մսալ հանրայնորեն ընդունված կամ հանդուրժվում են, հատկապես գյուղական շրջաններում, որտեղ գենդերային անհավասարություններն ավելի սուր են:

Կանայք սովորաբար ընկալվում են որպես երեխաներին ինամոդներ և կենցաղային աշխատանքներ կատարողներ՝ անկախ այն բանից՝ աշխատում են տնից դուրս, թե ոչ, իսկ տղամարդիկ սովորաբար դիտվում են որպես իրենց ընտանիքի տնտեսական բարեկեցության ու գոյատևման համար պատասխանատու՝ որպես հիմնական կերակրողը և ընտանիքի գլխավորը:

Մա անմիջական ազդեցություն ունի ռեսուրսների ու տնտեսական հնարավորությունների հասանելիության և չվարձատրվող, տնային գործերում կանանց հսկայական ծանրաբեռնվածության վրա: Մա կարող է հանգեցնել ժամանակի բացակայության, կանանց՝ եկամտաբեր գործունեությունում ներգրավվելու կարողությունների սահմանափակման և կանանց տնտեսական կախվածության:




Լայնորեն տարածված այն ակնկալիքը, թե կանանց առաջնային դերը կենցաղային դաշտում է, ամրապնդում է այն ընկալումը, թե կանայք չունեն քաղաքական կամ գործարար առաջնորդների ունակություններ, և դա հաճախ կանանց ետ է պահում առկա հնարավորություններին հետամուտ լինելուց: Համարվում է, որ բիզնես սկսելու կամ տեղական իշխանություններում առաջադրվելու համար կանայք բավականաչափ սոցիալական կապիտալ կուտակած են լինում միայն այն ժամանակ, երբ նրանք, օրինակ, 40-50-ն անց տարիքում են (այսինքն՝ երեխաներին մեծացնելուց հետո):



Կանայք հաճախ ունենում են նորարարական և «լավ գաղափարներ», սակայն, հաշվի առնելով նրանց դերն ու կարգավիճակը, տղամարդիկ են դրանք գործի դնում՝ հաճախ դրանք վերագրելով իրենց:

Հողերի մեծ մասը գրանցված է և կառավարվում է տղամարդկանց կողմից, իսկ կանանց կողմից հողի սեփականության նկատմամբ իրենց իրավունքների դե ֆակտո իրացումը բախվում է խոչընդոտների:



Հողի սեփականության նկատմամբ կանանց սահմանափակ հասանելիությունը բացատրվում է հետևյալով.

- Գրանցման գործընթաց, չնայած հողը քաղաքացիներին հատկացվել է անկախ նրանց սեռից, փաստացի բաշխումը և գրանցումը կատարվել են այն մարդկանց միջև և անունով, որոնք համարվել են «տնային տնտեսությունների գլխավոր»:

- Պատրիլոկալ ամուսնություններ, պատրիլոկալ են անվանվում այն ամուսնությունները, որոնց դեպքում հարսը տեղափոխվում է ամուսնու տուն՝ ապրելու վերջինիս ընտանիքի հետ. դրանք առավել տարածված են գյուղական բնակավայրերում:

Ամուսնության այսպիսի ավանդական տեսակի դեպքում կանայք սովորաբար չեն պահանջում հողի սեփականության իրենց իրավունքը ոչ իրենց սեփական ընտանիքներում, ոչ էլ նոր խորթ ընտանիքներում, որովհետև մտավախություն ունեն, որ դա կարող է դիտվել որպես իրենց ընտանիքների հետ առճակատում:

- Ժառանգության հետ կապված գործելակերպեր. գոյություն ունի հողը տղա ժառանգներին տալու նախապատվություն, հատկապես պատրիլոկալ ամուսնությունների համատեքստում, երբ սովորաբար որդիներն են փնտրում ընտանիքում, և ակնկալվում է, որ նրանք են վարելու ընտանեկան տնտեսությունը:

- Առկա է գյուղական բնակչության, հողի մասնագետների և քաղաքացիական ծառայողների՝ հողի նկատմամբ կանանց իրավունքների մասին գիտելիքի պակաս:

Կանանց՝ հողի սեփականության իրավունքից սահմանափակ կերպով օգտվելն անմիջական հետևանքներ ունի կանանց համար հենց այդ հողի օգտագործման վերաբերյալ որոշումներ կայացնելու, օժանդակ ծառայությունների և փոխառության համար գրավի և ձեռներեցությամբ զբաղվելու հասանելիության առումով:

Վարկային միջոցների և ձեռներեցության սահմանափակ հասանելիություն

• Կանանց համար սարքավորումների և տրանսպորտային միջոցների սահմանափակ հասանելիությունն ու դրանց նկատմամբ սահմանափակ հսկողությունը խոչընդոտում են եկամուտ վաստակելու նրանց հնարավորություններին և շուկաների հասանելիությանը:

• Նախքան գործարարությամբ զբաղվելը, կանայք ստիպված են հաղթահարել մի շարք խոչընդոտներ: Դրանք ներառում են անորոշության զգացումը, ռիսկի դիմելուց խուսափելը, պակաս ինքնավստահությունն այն ոլորտներում, որոնք սոցիալական կամ կարծրատիպային առումով չեն վերագրվում կանանց, գործարար կապերի բացակայությունը, տնտեսությունում և մասնավորապես՝ բիզնեսում կանանց դերի ու մասնակցության վերաբերյալ արմատացած ու պահպանվող կարծրատիպերը:

• Նյութական պատճառներից են՝ վարկեր ստանալու դժվարությունները, դրամական միջոցների ու գրավի համար գույքի սահմանափակ հասանելիությունը, ծանր տոկոսադրույքները, անբարենպաստ բիզնես միջավայրը, շարժունակության հետ կապված խոչընդոտները, մեծ շուկաների սահմանափակ հասանելիությունը:



• Արտադրական ռեսուրսների սահմանափակ հասանելիությունը լուրջ խոչընդոտ է գյուղաբնակ կանանց համար՝ գյուղատնտեսական ձեռներեցությամբ կամ ֆերմերային տնտեսության կառավարմամբ զբաղվելու համար: Օրինակ՝ գյուղաբնակ կանանց համար քիչ հասանելի է կամ հասանելի չէ գյուղատնտեսական տեխնիկան, ինչպիսիք են՝ տրակտորները, կոմբայները և հնձիչ մեքենաները:

Կանայք նաև սահմանափակ մասնակցություն ունեն գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման վերաբերյալ դասընթացներին, գիտելիքի և տեղեկությունների փոխանակմանը:

Միջազգային դոնորների կողմից ֆինանսավորվող մեծ թվով ծրագրեր ներառում են գենդերային բաղադրիչ և օժանդակություն գյուղատնտեսության ու գյուղական կյանքում կանանց ներգրավվածության ապահովման գործում: Այս ծրագրերը խթանում են ձեռներեցությունը գյուղաբնակ կանանց շրջանում՝ տրամադրելով տեխնիկական օգնություն, ուսուցում և ռեսուրսների (կապիտալ, կենդանիներ և այլն) ու շուկաների հասանելիություն:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Վնասակար օրգանիզմների դեմ ինտեգրացված պայքարը՝ որպես այլընտրանքային մոտեցում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2

Հեռ.՝ (+374 10) 52 36 04

Էլ.փոստ՝ officeawhhe@awhhe.am